ՊԱՎԼԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հ. Մ. ԲԱԲԹԻԿՅԱՆ

Պավլիկյան շարժման ընթացքի, նրա գաղափարախոսության, ուրիշ աղանդավորական շարժումների վրա Արևելքում և Արևմուտքում նրա թողած ազդեցության, այդ շարժման վերաբերյալ մեզ հասած գրավոր աղբյուրների մասին կա հսկայական գրականություն, սակայն պավլիկյան համայնքի կազմակերպության հարցերին նվիրված և ոչ մի ուսումնասիրություն գոյություն չունի։ Դա հասկանալի է և բացատրելի, որովհետև այդ հարցի լուսաբանման համար շատ չնչին նյութ է մեզ հասել։ Ինչպես հայտնի է, պավլիկյան շարժման մասին մեզ հասած բոլոր հիշատակությունները պատկանում են աղանդավորներին թշնամի դասակարգերի հեղինակների գրչին, իսկ վերջիններս շատ քիչ էին հետաքրքրվում վերոհիշյալ հարցով։ Նրանք սահմանափակվում էին գլխավորապես շարժման ընթացքը և դաղափարախոսությունը ցույց տալով։ Սակայն նրանց աշխատությունների մեջ, այնուամենայնիվ, ցրված, առանձին ակնարկների ձևով մենք գտնում ենք, ճիշտ է շատ քիչ, բայց և շատ կարևոր նյութ՝ տվյալ հարցը որոշ չափով լուսաբանելու համար։ Մենք տվյալ դեպքում նկատի ունենք IX դարի բյուզանդական հեղինակ Պետրոս Սիկիլիացու «Պավլիկյանների պատմությունը»[1], ուր ժամանակագրական հերթականությամբ շարադրված է տվյալ շարժումը նրա սկզբնավորությունից մինչև 869 թվականը, և այդ «Պատմությունը» ամբողջությամբ այլ բառերով շարադրած պատրիարք Փոտի (820—891) «Պատմվածք մանիքեցիների վերածվման մասին» վերնագիրը կրող գործը[2]։ Փոտի աշխատությունը պավլիկյան շարժման պատմությամբ զբաղվող նորագույն հեղինակները անտեսել են, ելնելով պարզապես այն սխալ ենթադրությունից, թե նա նոր բան ասել չէր կարող, քանի որ վերաշարադրում է Պետրոս Սիկիլիացու աշխատությունը։ Միակ փաստը, որ այդ հեղինակները դրական էին համարում այս աշխատության համար Պետրոս Սիկիլիացու «Պատմության» հետ համեմատած՝ այն էր, որ Փոտի մոտ ճիշտ է ցույց տրված աղանդապետ Սերգիոսի մահվան թվականը։ Սակայն այդպիսի մոտեցումը ճիշտ չէ։ Փոտը, իր բառերով շարադրելով Պետրոս Սիկիլիացու «Պատմությունը», այնուամենայնիվ, IX դարի դեպքերը շարադրելիս տալիս է նոր, արժեքավոր նյութ, թարմ տվյալներ, որոնց Պետրոս Սիկիլիացու աշխատության մեջ չենք հանդիպում։ Եվ դա հասկանալի է, եթե նկատի ունենանք այն փաստը, որ պատրիարք Փոտը IX դարի հեղինակ է և շարադրում է անձամբ տեսած և իրեն քաջածանոթ դեպքերի պատմությունը[3]։

Պավլիկյան համայնքի կազմակերպության հարցի վրա լույս սփռող նյութը վերաբերում է գլխավորապես IX դարին, այն է՝ պավլիկյան շարժման ամենալայն տարածման և հզորացման ժամանակաշրջանին, բայց այդ տվյալները կարելի է տարածել նախորդ ժամանակաշրջանների վրա ևս։

Նախ և առաջ կանգ առնենք պավլիկյան շարժման ղեկավարի՝ աղանդապետի հարցի վրա։ Որպես կանոն աղանդապետը, այն է՝ պավլիկյան համայնքի գաղափարական *ղեկավարը, ինքը-*

---

[1] *Petri Siculi*, Historia utilis et refutatio atque eversio haereseos Manichaeorum qui et Pauliciani dicuntur, Migne, Patrologia graeca, t. 104.

[2] *Photii*, Patriarchae Constantinopolitani Narratio de Manichaeis recens repullulantibus, Migne, Patrologia graeca t. 102.

[3] *Պետք է ասել, որ եղել են մի շարք պատմաբաններ, գլխավորապես անցյալ դարի վերջին և այս դարի սկզբին, որոնք, ընդհակառակը, մեծ արժեք են տվել Փոտի աշխատությանը, այն համարելով սկզբնաղբյուր Պետրոս Սիկիլիացու «Պավլիկյանների պատմության»։ Բայց այդ պատմաբաններն էլ բոլորովին չէին հետաքրքրվում ներկա հոդվածում բարձրացված հարցերով։*

վում էր մեկ հոգի։ Սակայն աղբյուրները ցույց են տալիս, որ եղել են դեպքեր, երբ ղեկավարի պաշտոնում հանդես են եկել երկու հոգի։ Դժբախտաբար, աղբյուրներն այդ մասին խոսում են այն դեպքերում միայն, երբ միաժամանակ հանդես եկած աղանդապետների միջև պայքար էր գնում։ Սկզբնաղբյուրները ցույց են տալիս, որ պավլիկյան շարժումը գլխավորել են միաժամանակ երկու հոգի՝ առաջին անգամ VIII դարի առաջին կիսում, երբ պավլիկյան շարժման գլուխ են անցնում աղանդավորների նկատմամբ բյուզանդական Հուստինիանոս II կայսր կազմակերպած կոտորածից փրկված Պողոս Հայի երկու որդիները՝ Գեգնեսիոս—Տիմոթեոսը և Թեոդորոսը։ Սրանց միջև գաղափարական հողի վրա տեղի է ունեցել սուր պայքար, ինչպես կարելի է կռահել սկզբնաղբյուրների աղոտ վկայություններից։ Հաղթող է դուրս եկել, ամենայն հավանականությամբ, Գեգնեսիոսը և այնուհետև որպես աղանդապետ հիշատակվում է միայն նա, իսկ Թեոդորոսի մասին աղբյուրներում այլևս խոսք չկա։

Երկրորդ անգամ աղանդավորներին միաժամանակ երկու հոգի են գլխավորել IX դարի սկզբում։ Այս անգամ պավլիկյան շարժման գաղափարական ղեկավարների դերում հանդես են գալիս Սերգիոսը (գործել է 801—835 թթ.) և Վահանը։ Նրանց մասին խոսելիս՝ սկզբնաղբյուրները նույնպես մատնացույց են անում այդ երկուսի միջև տեղի ունեցող պայքարը, որից հաղթող է դուրս եկել Սերգիոսը։

Հարց է ծագում։ Արդյո՞ք կանոն էր, որ աղանդապետները ընտրվեին երկու հոգի։ Պատրիարք Փոտը ուղղակի գրում է, որ աղանդապետ Սերգիոսի մահից հետո աղանդավորները «աստվածամարտության ուսուցչի կոչումը չտվեցին մեկին կամ երկուսին»[1]։ Վերջին բառը բացակայում է Փոտի աշխատության սկզբնաղբյուրի՝ Պետրոս Սիկիլիացու «Պատմության» մեջ։ Չնայած Փոտի ուղղակի ցուցմունքին, մենք դալիս ենք այն եզրակացության, որ պավլիկյան համայնքի գաղափարական ղեկավարի պաշտոնում ընտրվում էր մեկ հոգի, իսկ երկուսի հիշատակությունը բացատրվում է այն փաստով, որ պավլիկյան շարժումը միատարր շարժում չ՛ր, և միաժամանակ գոյություն ունեցող երկու աղանդապետները գլխավորում էին նույն շարժման երկու տարբեր թևերը։ Պավլիկյան շարժման մեջ թե՛ քաղաքից, թե՛ գյուղից հոսում էին բազմատարր զանգվածներ և հասկանալի է, որ այդ շարժումը չէր կարող միատարր լինել, որ անխուսափելի էր ներքին պայքարը։ Այդ շատ հստակ կերպով երևաց IX դարի սկզբին՝ Սերգիոսի և Վահանի ժամանակ։ Թեև աղբյուրները ուղղակի նշում են, որ հենց Սերգիոսը պավլիկյան շարժումը բաժանեց երկուսի, մի թևը գլխավորեց ինքը, իսկ մյուսը՝ Վահանը, բայց, ամենայն հավանականությամբ, այդ երկու հոսանքները նույն շարժման մեջ գոյություն են ունեցել տվյալ աղանդապետներից առաջ էլ։ Յուրաքանչյուր աղանդապետ կատաղի պայքար էր տանում որպեսզի հնարավորին չափ թուլացնի հակառակ թևը, իր կողմը գրավի նրա հետևորդներին։ Պետրոս Սիկիլիացին հիշում է, որ Սերգիոսը՝ պայքարելով Վահանի դեմ, ջանում էր այդ միջոցով իր կողմը գրավել «ուղղափառ քրիստոնյաներին»[2]։ Հասկանալի չէ, թե ինչու ուղղափառ քրիստոնյաները պետք է անցնեին Սերգիոսի կողմը, աղանդավոր դառնային, երբ պայքարը գնում էր Սերգիոսի և Վահանի միջև։ Սակայն պատրիարք Փոտի մոտ ամեն ինչ պարզ է։ Նա գրում է, որ աղանդապետ Սերգիոսը ջանում էր այդ պայքարի ժամանակ իր կողմը գրավել Վահանի հետևորդներին[3]։ Պայքարը սերգիոսականների և վահանյանների միջև շարունակվում է առավել սրությամբ Սերգիոսի մահից (835) հետո էլ։ Սկզբնաղբյուրների հիշատակությունների համաձայն Սերգիոսի հետևորդները կոտորում էին Վահանի հետևորդներին «կարծես նրանք այլադավաններ լինեին» (ὡς ἑτεροπίστους κτείνοντες)[4]։ Սերգիոսականները նրանց կոտորելով ուզում էին «փրկենց վրայից վերացնել (վահանյանների պատճառով) իրենց կրած խայտառակությունը»[5]։

Վերևում մենք ցույց տվեցինք, որ աղանդապետի պաշտոնը ընտրովի էր, սակայն պետք է նշել, որ նրա ընտրության գործում մասնակցում էին ոչ բոլոր աղանդավորները։ Աղանդապետին ընտրում էր աղանդավորների ղեկավար կորիզը, որի անդամները կոչվում էին սինեկդեմոսներ

[1] *Photii*, col. 81.
[2] *Petri Siculi*, col. 1300 B.
[3] *Photii*, col. 73.
[4] Նույն տեղում, col. 76.
[5] *Petri Siculi*, col. 1300 D.

ուղեկիցներ[1]։ Պետրոս Սիկիլիացու մոտ ընդհանրապես ասված է, որ սինեկդեմոսներն ու մնացած աղանդավոր ժողովուրդը Սերգիոսի մահից հետո ոչ մի աղանդապետ չընտրեցին։ Սակայն պատրիարք Փոտի մոտ այդ փաստը ավելի հստակ է շարադրված։ Նա գրում է, որ Սերգիոսի մահից հետո սինեկդեմոսները «աստվածամարտության ուսուցչի կոչումը չտվեցին մեկին կամ երկուսին, այլ գլխավորեցին մոլորված ժողովուրդը բոլորը՝ համահավասար իրավունքներով»[2]։

Սինեկդեմոսներին անմիջականորեն ենթարկվում էին, ինչպես ասում է Պետրոս Սիկիլիացին, «ավելի ցածր աստիճանի ս ρ ἰε»[3] որոնք կոչվում էին նոտարներ։ Վերջիններս, ըստ պատրիարք Փոտի վկայության, նշանակվում էին սինեկդեմոսների կողմից (νοταρίους ἐπίτιον[4]։ Նոտարների, ինչպես և սինեկդեմոսների պարտականությունն էր պավլիկյան գաղափարների տարածումը և նրանց ճշգրիտ կիրառումը[5]։

Բացի սինեկդեմոսներից ու նոտարներից, աղանդապետը ուներ նաև աշակերտների մի խումբ, որոնք աղբյուրներում կոչվում են «աստատներ»[6]։ Պետրոս Սիկիլիացին նրանց համարում է աղանդապետի, տվյալ դեպքում Սերգիոսի աշակերտները, իսկ պատրիարք Փոտը Սերգիոսի աշակերտներից ամենաերևելիները։

Աստատների մասին մեզ հասած տեղեկությունները չնչին են, բայց եղածից էլ կարելի է հանգել այն եզրակացության, որ ի տարբերություն սինեկդեմոսների և նոտարների, որոնք զբաղվում էին գլխավորապես գաղափարական հարցերով, աստատները պավլիկյանների տարբեր համայնքներում թշնամու դեմ դինված պայքարի կազմակերպողներն էին։ Սկզբնաղբյուրներում հիշատակված է միայն այն փաստը, թե ինչպես աստատները կազմակերպում են Պոնտոսի Կինոխորիոն բնակատեղի աղանդավորների դավադրությունը ընդդեմ Նեոկեսարիա քաղաքի բյուզանդական էքսարխոս Պարակոնդակեսի, որը դավադիրների կողմից սպանվում է, և ինչպես իրենք աստատները սպանում են Նեոկեսարիայի եպիսկոպոս Թոմային։ Աստատների կազմակերպած դավադրության երկու զոհերն էլ Արմենիակոն թեմում պավլիկյաններին կոտորելու կայսերական հրամանի իրականացնողներն էին։

Այժմ կանգ առնենք մի շատ կարևոր հարցի վրա, որը պավլիկյան շարժման ուսումնասիրողների ուշադրությունից բոլորովին վրիպել է։ Դա պավլիկյան աղանդավորների զինված

---

[1] Սինեկդեմոս են անվանվում Գործք առաքելոցում (ԺԹ, 30) Պողոս առաքյալի ուղեկիցները։ Պավլիկյանները, որոնք իրենց պաշտպանն էին համարում նշված առաքյալին, իրենց աղանդապետներին Պողոս առաքյալի աշակերտների անունները տալուց բացի, իրենց ղեկավար կորիզի անվանումը ևս վերցրել էին առաքյալի թղթերից։

[2] *Photii*, col. 81.

[3] *Petri Siculi*, col 1301 C. Այդպիսի բառ հունարեն լեզվում չկա։ Ուսումնասիրողների մի մասը այդ համարել է μιαρὸς (պիղծ) բառի խեղաթյուրված ձևը, իսկ ուրիշներն էլ այդ բառի տակ հասկացել են μὴ ἱερεῖς (ոչ սրբազան, ոչ քահանայական)։ Տեքստից երևում է, որ այդ բառի տակ պետք է հասկանալ «եկեղեցական», «հոգևորական»։

[4] *Photii*, col. 81.

[5] Սերգիոսի սինեկդեմոսներից հիշատակված են ընդամենը վեց հոգի՝ Միքայելը, Կանակարիսը, Հովհաննեսը, Թեոդոտոսը, Վասիլիոսը և Զոսիմոսը, թեև Պետրոս Սիկիլիացին ասում է, որ Սերգիոսն ուներ և շատ ուրիշ սինեկդեմոսներ։

[6] «Աստատ» ἀστατος հունարեն նշանակում է տատանվող, անհեռանոզական, անկայուն, մի վայրում չմնացող։ Եթե մենք այդ բառը համարենք հունարեն, ապա, ըստ երևույթին, պետք է որ վերջին նշանակությունը տանք, ինչպես ենթադրում է Կ. Յուզբաշյանը, այն է, որ աստատ անունը կրող մարդիկ պավլիկյան գաղափարները տարածելու համար մի վայրում չէին մնում, այլ ճանապարհորդում էին վայրից վայր։ Որքան ինձ հայտնի է, հայագետ Կ. Տեր-Մկրտչյանը կասկած է հայտնել այդ բառի հունարեն լինելու առթիվ։ Նա ենթադրում էր, որ «աստատների» տակ պետք է հասկանալ հայկական սկզբնաղբյուրներում հիշատակված Ծագերին (տե՛ս Պաւղիկեանք Բիւզանդական կայսրութեան մէջ և մերձաւոր հերձուածային երեոյթներ Հայաստանի մէջ, Երուսաղեմ, 1938, էջ 120։ Ծագերի մասին տե՛ս Н. Адонц, О происхождении армян-цатов, Журнал Министерства Народного Просвещения, 1911, апрель, էջ 238–249)։ Սակայն գուցե այդ բառին մոտենանք որպես հայերեն բառի և ենթադրենք, թե «աստատ» բառը արտահայտել է հայերեն «հաստատ», որից և «հաստատուն» իմաստը, որը նշանակում է հզոր, կայուն, հավատարիմ, վստահելի։ Սերգիոսի մերձավորագույն աշակերտները իսկապես որ այդպիսիք են եղել։

ուժերի հարցն է։ Այս խնդրի վրա լույս է սփռում միայն պատրիարք Փոտի աշխատությունը։ Պատրիարքն ցույց է տալիս, որ պավլիկյանները, համենայն դեպս IX դարի սկզբից սկսած, ունեցել են կանոնավոր զինված ուժեր, որոնք գլխավորում էր ոչ թե աղանդապետը, ինչպես կարելի էր սպասել, այլ այդ ուժերի զեկավարը։ Վերջինս Փոտի մոտ կոչվում է «զինված ուժերի արխոնտ» (τῆς ὁπλιτικῆς δυνάμεως ἄρχων)[1]։ Նա, ինչպես երևում է Փոտի աշխատությունից, շատ մեծ ուժ ուներ և կարող էր մեծ դեր խաղալ պավլիկյան համայնքի ներսում ծագած բազմաթիվ հարցերի լուծման գործում։ Այսպես, «Մանիքեցիների վերածվման մասին» աշխատությունը մեզ ցույց է տալիս, որ աղանդապետ Սերգիոսն ու նրա հետևորդները Վահանից ու վահանյաններից ուժեղ էին ոչ միայն իրենց թվական գերազանցությամբ, այլև գլխավորապես այն պատճառով, որ զինված ուժերի հրամանատարը «հավատքով» Սերգիոսին կողմնակից էր (ἐπεκράτει γὰρ ἡ αἵρεσις Σεργίου τῶν τε πλήθει, καὶ ὅτι τῆς ἐν αὐτοῖς ὁπλιτικῆς δυνάμεως ὁ ἄρχων τῇ δόξῃ προσετέτακτο Σεργίου)[2]։

Այսպիսով, կարելի է գալ այն եզրակացության, որ պավլիկյան համայնքի գաղափարական և ռազմական զեկավարության միջև գոյություն ուներ որոշակի սահմանազատում։ Փոտի վերևում նշված վկայությունը միանգամայն արժանահավատ է և ոչ մի դեպքում ենթակա չէ կասկածի։ Դա ցույց է տալիս պավլիկյանների պատմության ընթացքը աղանդապետ Սերգիոսի մահից հետո ընկած ժամանակաշրջանում։ Ըստ Պետրոս Սիկիլիացու տվյալների (հետևաբար և պատրիարք Փոտի), Սերգիոսի աշակերտները իրենց ուսուցչի մահից հետո այլևս ոչ մի աղանդապետ չհռչակեցին, ինչպես այդ տեղի էր ունենում նախկինում աղանդապետի մահվանից հետո (μετὰ τὸν διδάσκαλον ἀναγορεύσαντες καθάπερ οἱ πρώην)[3]։ Սակայն Պետրոս Սիկիլիացին շարունակության մեջ գրում է, որ պավլիկյան շարժումը այնուհետև գլխավորեց Կարբեասը[4]։ Եթե չլիներ պատրիարք Փոտի ցուցմունքը պավլիկյանների երկու գաղափարական և ռազմական զեկավարների գոյության մասին, ապա պետք էր կամ սինեկդեմոսների՝ այլևս աղանդապետ չընտրելու որոշման փաստը համարել Պետրոս Սիկիլիացու հնարածը, կամ էլ Կարբեասի ընտրությունը դիտել իբրև սինեկդեմոսների ընդունած որոշման խախտում։ Սակայն Փոտի հիշատակության շնորհիվ պարզ է դառնում Կարբեասի դերը։ Նա պարզապես ռազմական ուժերի զեկավարն էր (τῆς ὁπλιτικῆς δυνάμεως ὁ ἄρχων) և ոչ թե գաղափարական զեկավար՝ աղանդապետ։ Դա հաստատվում է Փոտի այլ տվյալներով ևս, որոնք բացակայում են Պետրոս Սիկիլիացու մոտ։ Փոտի տվյալների համաձայն Կարբեասը միանգամայն անտարբեր էր հավատքի հարցերում (πιστεύομεν οὐδ' ἡντινα στέργουσι), մի բան, որ ոչ մի դեպքում չէր կարելի ասել աղանդավորների գաղափարական զեկավարի մասին։ Նա պարզապես գլխավորում էր պավլիկյանների զինված պայքարը Բյուզանդական կայսրության դեմ։ Դրանով պետք է բացատրել և այն փաստը, որ անեծքի բանաձևերի մի քանի ժողովածուներում, բանաձևեր, որոնք բացարձակապես վերաբերում են աղանդավորների գաղափարախոսությանը, բացակայում են Կարբեասի և նրան հաջորդած Խրիսոքիրի անունները, այն ժամանակ, երբ մնացած բոլոր աղանդապետների, այսինքն՝ գաղափարական զեկավարների անունները մեկ առ մեկ հիշատակված են և նզովքի ենթարկված[6]։

Փոտի մոտ հիշատակված է նաև մի կարևոր փաստ աղանդավորների զինված ուժերի զեկավարի ընտրության կարգի մասին։ Ըստ նրա Կարբեասը ընտրվել է աղանդավոր ժողովրդի կողմից (ἄρχειν ὑπὸ τοῦ πλήθους ἐρρέθη)[7], այսինքն՝ ռազմական զեկավարի ընտրության գործում

[1] *Photii*, col. 76.

[2] Նույն տեղում.

[3] *Petri Siculi*, col. 1301 C.

[4] Կարբեաս անունը հայերեն Կարապետ անվան փաղաքշականն է (Կարպիս)։ Բյուզանդական միջնադարյան էպոսում՝ Դիգենիս Ակրիտասում նա հանդես է գալիս Կարո(ես) ձևով։ Նույն ակրիտյան ցիկլին վերաբերող մի երգում Կարբեասը հանդես է գալիս Կարբիերիս անունով (տե՛ս *H. Gregoire*. Notes sur l'Epopée Byzantine, Une mention du heros Ankylas et du Paulicien Karbeas dans un chant akritique, „Byzantion", t. XIII, 1938, fasc. 1, էջ 251)։ Այսպես մենք առաջին անգամ հանդիպում ենք Կարբեասի անվան լրիվ՝ Կարապետ ձևին, թեպետ և որոշ չափով խեղաթյուրված։

[5] *Photii*, col. 8..

[6] Հրատարակված են հետևյալ աշխատության մեջ. *G. Ficker*. Eine Sammlung von Abschworungsformeln, „Zeitschrift für Kirchengeschichte", Bd. XXVII, Gotha, 1906.

[7] *Photii*, col. 81.

մասնակցում էին բոլոր աղանդավորները և ոչ միայն սինեկդեմոսները, որոնց էր պատկանում, ինչպես տեսանք, գաղափարական ղեկավարի ընտրության մենաշնորհը։

Այսպիսով, մեր ձեռքի տակ ունեցած նյութի հիման վրա կարելի է անել հետևյալ ընդհանուր եզրակացությունները։

Պավլիկյան համայնքի գլխին կանգնած էին սինեկդեմոսների կողմից ընտրվող աղանդապետը՝ աղանդավորների գաղափարական ղեկավարը, և ռազմական ուժերի ղեկավարը, որին ընտրում էին բոլոր աղանդավորները։ Մենք չունենք այնպիսի փաստեր, որոնք ցույց տային, որ ռազմական ուժերի ղեկավարը որևէ չափով կախյալ լիներ աղանդապետից։ Փաստերը ավելի շուտ ցույց են տալիս, որ ռազմական ուժերի ղեկավարը ենթակա չէր աղանդապետին։ Աղանդապետին անմիջականորեն ենթարկվում էին սինեկդեմոսները, որոնք, ինչպես և վերջիններիս ենթակա նոտարները, զբաղվում էին գաղափարական հարցերով։ Աղանդապետին էին ենթարկվում նաև աստատները, որոնք գլխավորապես աշխարհիկ հարցերով էին զբաղված։

К ВОПРОСУ ОБ ОРГАНИЗАЦИИ ПАВЛИКИАНСКОЙ ОБЩИНЫ

Р. М. БАРТИКЯН

(Резюме)

На основании «Полезной истории Манихеев» автора IX в. Петра Сицилийского и ее перефразировки, сделанной патриархом Фотием, выясняется ряд важных вопросов, касающихся организации павликианской общины. Во главе общины еретиков стояли два вождя — идеологический — ереснарх и военный, который назван Фотием «архонтом военных сил» еретиков, по всей вероятности не подчиняющийся ереснарху. Военный вождь, выбираемый всеми еретиками, играл большую роль в решении разных вопросов, возникающих в самом движении павликиан. Ереснарх выбирался подчиненными ему учениками — синекдемами. Ереснарху подчинялись также нотарии, назначаемые синекдемами, которые, как и синекдемы, вели идеологическую работу. Светскими вопросами занимались другие ученики ереснарха, названные в источниках астатами.